ՇՆՈՐՀԱՆԴԵՍ ՄԱՅՐ ԱԹՈՌ Ս. ԷՋՄԻԱԾՆՈՒՄ

Փետրվարի 10-ին Մայր Աթոռ Ս. Էջմիածնում, բարձր նախագահությամբ Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի, տեղի ունեցավ Գերագույն Հոգևոր Խորհրդի և ՀՀ Սահմանադրական դատարանի անդամ Ռաֆայել Պապայանի «Արդի իրավունքի քրիստոնեական ակունքները» գրքի շնորհանդեսը:

Հանդիսությունը բացեց Մայր Աթոռի դիվանապետ Տ. Արշակ վրդ. Խաչատրյանը: Այնուհետև այս աշխատության ստեղծմանն ու արժեվորմանն անդրադարձավ ՀՀ Սահմանադրական դատարանի նախագահ Գագիկ Հարությունյանը՝ մասնավորապես նշելով. «Եթե մեկ նախադասությամբ փորձենք գնահատել այս գիրքը, ապա պարզապես պետք է ասենք, որ սա ճշմարիտ արժեքների փնտրտուք է: ... Սա բացառիկ մի աշխատություն է, որն այսօր անհրաժեշտ է քրիստոնեական և ինչու չէ՝ նաև ոչ քրիստոնեական հասարակությանը»:

Գրքի հոգևոր և եկեղեցագիտական արժեքի մասին խոսեց Արարատյան Հայրապետական թեմի առաջնորդական փոխանորդ Տ. Նավասարդ եպս. Կճոյանը՝ բարձր գնահատելով հեղինակի նրբին նկատառումներն ու մտորումները Աստված-մարդ և մարդ-մարդ ճանապարհին: Գնահատականի խոսքով հանդես եկավ նաև Գերագույն Հոգևոր Խորհրդի անդամ ակադեմիկոս Վլադիմիր Բարխուդարյանը:

Իր երախտագիտության խոսքն Ամենայն Հայոց Կաթողիկոսին և այս աշխատության ստեղծմանը սատարած բոլոր անձանց ուղղեց նաև գրքի բազմարդյուն հեղինակ Ռաֆայել Պապայանը:

Հավարտ հանդիսության ներկաներին իր գնահատականը ու օրհնությունը բերեց Ամենայն Հայոց Հայրապետը: «Մենք հավատում ենք, որ այս գիրքն իրապես ընթերցողին պիտի առաջնորդի դեպի Աստված, պիտի անդրադարձնի մի, որ իրավունքը բխում է աստվածային պատվիրանների ու պատգամների պահպանությունից և այն սերտորեն շաղկապված է պարտքի ու պատասխանատվության բարձր գիտակցության հետ»,- նշեց Նորին Սրբությունը: Ի գնահատումն տեր և տիկին Ռաֆայել և Արփինե Պապայանների բազմամյա եկեղեցանվեր գործունեության՝ Հայոց Հայրապետը նրանց շնորհեց «Ս. Ներսես Շնորհալի» շքանշան:

Շնորհանդեսին գեղարվեստական հայտագրով հանդես եկավ Ս. Գեղարդ վանքի երգչախումբը՝ ղեկավարությամբ Անահիտ Պապայանի:

Հանդիսությանը ներկա էին Մայր Աթոռ Ս. Էջմիածնի միաբաններ, ՀՀ Սահմանադրական դատարանի անդամներ, գիտության ու մշակույթի անվանի գործիչներ:

ՄԱՅՐ ԱԹՈՌ Ս. ԷՋՄԻԱԾՆԻ
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԸ ԳՆԱՀԱՏԱՆՔԻ ԽՈՍՔ Է ԱՍՈՒՄ ՌԱՖԱՅԵԼ ՊԱՊԱՅԱՆԻ ԳՐՔԻ ՇՆՈՐՀԱՆԴԵՍԻՆ